ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ---------- 2020 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ 100 ՏՈԿՈՍԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի հուլիսի 10-ի №242Ա որոշմամբ համաձայնություն է տրվել «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 100 տոկոս բաժնետոմսերի սեփականատեր՝ «ՎԵՈՆ» ընկերությունների խմբում ընդգրկված «Վիմպել-Կոմունիկացիի» հանրային բաժնետիրական ընկերությանը պատկանող 100 տոկոս բաժնետոմսերը «ԹԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն (այսուհետ՝ «ԹԻՄ» ՍՊԸ) օտարելուն,

բ) Ընկերության 2020 թվականի հուլիսի 16-ի N204/20-И11 գրությունը, որում նշվել է, որ «Վիմպել-Կոմունիկացիի» հանրային բաժնետիրական ընկերության և «ԹԻՄ» ՍՊԸ-ի միջև բաժնետոմսերի համաձայնեցված գնով առուվաճառքի գործարքի ֆինանսավորման աղբյուրը վարկային միջոցներն են, որի կապակցությամբ «ԹԻՄ» ՍՊԸ-ի և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ նշված միջոցները կտրամադրվեն բանկի կողմից, և վերջիններիս միջև կնքված վարկային պայմանագրով դրանք վերադարձնելու «ԹԻՄ» ՍՊԸ-ի պարտավորությունների կատարումն ապահովված կլինի՝ Ընկերության բաժնետոմսերի գրավով, որի կապակցությամբ Ընկերությունը խնդրել է, իր բաժնետոմսերի սեփականության իրավունքը «ԹԻՄ» ՍՊԸ-ին փոխանցելու գործարքի իրականացման նպատակով, համաձայնություն տալ նշված

բաժնետոմսերը «ԹԻՄ» ՍՊԸ-ի կողմից «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրմանը,

գ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի հուլիսի 23-ի №01/11.1/4022-2020 գրությունը, ըստ որի՝ նախարարությունն առարկություն չունի «Վիմպել-Կոմունիկացիի» հանրային բաժնետիրական ընկերության և «ԹԻՄ» ՍՊԸ-ի միջև բաժնետոմսերի համաձայնեցված գնով առքուվաճառքի գործարքի ֆինանսավորման աղբյուր հանդիսացող վարկային միջոցների և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև պայմանավորվածություն ձեռք բերելու վերաբերյալ, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը «ԹԻՄ» ՍՊԸ-ի կողմից ձեռք բերելուց հետո վերջինիս կողմից «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն։
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով տրված համաձայնությունը գործարքի կնքման համար վավեր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում:
3. Ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան առնչվող փաստաթղթերը։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2020թ.